


Սմբատս Բիւրաս
Նսբագրութիւն «Փիիկնիկ», Ի
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՆՍՈՒՐ

Նրո. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է
ՉԵՆԱԳԻՐ ԵՏ յ՛գար-
ձուի

Փ Ի Ի Կ Ն Ի Կ

Կը ծախուի ՄԷԿ ղրուօ ողջի

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6
Ազգեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

Շ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

Ց ՆՈՅԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 19

ԿԻԼԻԿԻՈՅ

ՆՈՐԸՆՏԻՐ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Այս շարթուան թղթաբերով ըստացուած լուրերուն գլուխն է Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեանց վերջին արդիւնքը, նոյնքան գեղեցիկ որքան ուրախաւիթ: Անոնք որ մօտէն կը ճանչնան Նորընտիր Կաթողիկոսին անձնաւորութիւնն ու մէկէ աւելի բարեմասնութիւնները, բնականաբար պիտի չը վարանին երանի՛ կարդալու Կիլիկեցիներուն, որոնք ա՛յնքան խելացի կերպով յաջողեցան վերջապէս գտնել իրենց Ս. Աթոռին յարմարագոյն Կահակալը:

Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցին մէջ, Կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորաց Համագումար ժողովը, Հոկտ. 12|25ին, մասնակցութեամբ 62 քուէարկողներու, կատարեց վերջին ընտրութիւնները, եռանուն ցանկի մը վրայ, որ վերջնապէս վաւերացուած էր Բ. Դունէն: Այս եռանուն ցանկին մէջ էին Տ. Տ.

Սահակ Խապատեան, Մովսէս Կէօմբիւքճեան և Բարթողիմէոս Չամչեան եպիսկոպոսները, որոնցմէ վերջինը՝ վերջին պահուն հրաժարած էր իր ընտրելութեան իրաւունքէն:

Ու 62 քուէներու միաձայնութեամբ ընտրուեցաւ Տաւն Կիլիկիոյ Կաթողիկոս Աւեն. Տ. Տ. Սահակ Արքեպիսկոպոս Խապատեանը, խանգավառ ծափերու և կեցցէներու մէջ, արդիւնքը նոյն օրը հեռագրուեցաւ Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքին որ իր կարգին, հեռագրեց էջմիածին, Ամենայն Հայոց Հայրապետին, Երուսաղէմի Ս. Պատրիարքին ու մասնաւոր հեռագրով մ'ալ շնորհաւորեց Նորին Ամեն. Սըրբազնութիւնը Տ. Տ. Սահակ Արքեպիսկոպոս Խապատեանը:

Հիմայ որ ընտրուեցաւ Սոսոյ այրիացեալ Ս. Աթոռին Հայրապետը, ա՛լ կրնանք քիչ մը թեթեցած համարել ազգային կրօնային այդ մեծ մտահոգութիւնը, որ Տ երկար տարիներէ ի վեր կը շարժարէր Կիլիկիոյ Ս. Աթոռն ու 24է աւելի անտէրունչ թեմերը:

Մտաւոր ժամանակի մը թողլով

մամուլի տեսութիւնները՝ Կիլիկիոյ ազգային եկեղեցական, կրթական ու տնտեսական և ուրիշ բարդ խնդիրներուն վրայ, կարծենք թէ ոչ նուազ շահեկան է հոս դնել կարճաժամ կենսագրականը Տանն Կիլիկիոյ նորընտիր Հայրապետին:

Նորընտիրը ծնած է Խարբէրդի Եղեգի գիւղը. 54 տարու, պարթեւ հասակով, գեղանձնեայ, թիկնաւէտ, թխամորթ, քաջաուղղ, լաւ զարգացած, մեր եկեղեցական դասուն պարծանքներէն մին է:

Պատանին Գաբրիէլ Կարապետեան — այս է աւագանի անունը նորընտիր Կաթողիկոսին — Երուսաղէմի ժառ. վարժարանն ընդունուելով 1866 ին, հոն առաւ իր նախնական կրթութիւնը, յետոյ, միւս ընկերակիցներուն վրայ իր գերազանցութիւնը նշմարուելով, երջանկայիշատակ Եսայի Ս. Պատրիարքին հրամանով, ուրիշ երկու յաջողակ ընկերներու հետ սարկաւազ ձեռնադրուելով զրկուեցաւ Կ. Պոլիս, կատարելագործուելու համար ուսմանց զանազան ճիւղերուն ու, ֆրանսերէնի մէջ մասնաւորապէս:

Գաբրիէլ Սարկաւազի ընկերներն էին Դամասկոսցի Մագառոս Սարկ. Մագառոսեանն (այժմ Ղեւոնդ վարդապետ, Ելիտից Տեսուչ Ս. Յակովբեանց Միաբանութեան) և Ռոտտոթոցի Մելիոն Սարկ. Յակովբեանը (այժմ Վահան վարդապետ Յակովբեան): Կ. Պոլիս երեք տարի մնալէ յետոյ Գաբրիէլ Սարկաւազ Խապսեան կը վերադառնայ իր ընկերներով Երուսաղէմ Ս. Աթոռը, որուն միաբանութեան անդամներէն էր ինք և իրեն հետ վերադարձող միւս երկու ընկերները: Այն ատենները Ամեն. Տ. Մեկքիսեղեկ Սրբազան Մուրատեանց, — երբեմնի Գաբրիէլ Մուրատեանցը — Տեսուչն էր ժառ. վարժարանին, ուր Գաբրիէլ իր երկու անբաժան ընկերներով ուսուցիչ կը

կարգուի: Իր ուսուցչութեան պարապմանց մէջ ժասանակ կը գտնէ յորինելու կարևոր դասագրքեր, որոնք դեռ մինչև ցարգ պահած են իրենց կարևորութիւնը, մէկէ աւելի առաւելութիւններովը. Աշխարհագրութիւն, Բնակ. Պատմութիւն, Տիեզերագրութիւն, Հին և նոր Կսակարան, ևն, Երուսաղէմի ապագրութիւն:

1877ին, Վարդապետին, դարձեալ իր միւս ընկերաց հետ վարդապետ կը ձեռնադրուի և կ'ըլլայ Սահակ վարդապետ Խապսեան ու Ամեն. Մեկքիսեղեկ Սրբազան Հօր Իզմիր մեկնելէն յետոյ կ'ստանձնէ իր ընկերաց հետ ժառ. վարժարանին Տեսչութիւնը, զոր մինչև այսօր կը վարէ Ս. Աթոռին Լուսարարապետութեանը հետ:

Ո թսուական թուականներուն Ռուսիա գնացած է նուիրակ, ընկերակցութեամբ Գեր. Տ. Մամբրէ Մարկոսեանի, որուն հետ մէկտեղ հանգուցեալ Մակար Կաթողիկոսէն եպիսկոպոսութիւնն ընդունելով վերադարձած է Երուսաղէմ: Յայտնի է թէ անցած տարի Կիլիկիոյ Կաթող. ընտրութեանց նախագահեց Ատանա և Գէորգ Եպ. Երէցեանի կաթողիկոսացման մէջ նշանակելի դեր մը կատարեց նորին Ամեն. Սրբազնութիւնը:

Մօտէն ծանօթ՝ նորընտիր Հայրապետին մէկէ աւելի ձիրքերուն ու տաղանդին, զորս անտարակոյս պիտի գիտնայ իսպառ գնել իր որդեգրած վիճակներուն բարգաւաճմանն ու պայծառացմանը, այժմէն կրնանք շնորհաւորել սոյն երջանկաբեր ընտրութիւնը, մաղթելով որ Ամեն. Տ. Տ. Սահակ Խապսեան Տանն Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոսը նոր դարագրելուի մը բանայ վեհանորդմանն ու երջանկութեան, այրիացեալ Կիլիկիոյ համար, և Սոյ Ս. Սօփիա Տաճարին երկնաբերձ գմբէթին գազաթը սաւառնող Շնորհալիին վեհափառ հոգին հրճուի:

լսելով «Զարթի՛ք, փա՛նֆ ի՛ն, զարթի՛ք»ի հրեշտակային համերգը:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղեքս. 4 նոյ. 1902

Թաղային Խնամակալութիւնս կը հրաւիրէ հանգուցեալ Յակօր Կիւտիկեանի ժառանգորդները ինքզինքնին ծանօթացնել, անձամբ կամ փոխանորդաբար ներկայանալով Ազգային Առաջնորդարան, թուականէս մինչև տասն օր:

Կնիք Թաղ. Խնամակալութեան

* *

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ

Աղեքս. 4 նոյ. 1902

«Արևելք» և «Արշտոյս» լրագրաց վերջի թիւերուն մէջ՝ ի շարս կարգ մը անհիմն լուրերու՝ Խնամակալութեան ֆոխ-Ատենապետ Վսեմ. Բարթոլ Պէյի կողմանէ ինչ ինչ արժէթըլթոց վաճառմամբ ազգային սնտուկին ֆլասաբեր տնօրինութիւններ կատարուած ըլլալը ծանուցուած լինելով, Խնամակալութիւնս օգտակար կը համարի բացարձակապէս հերքել սոյն ստայօղ լուրը, ըստ որում ո՛չ Խորհուրդս և ո՛չ ն. Վսեմութիւնը իր պաշտօնավարութեան սկիզբէն ցայսօր ո և է արժէթըլթ չէ վաճառած ազգային սնտուկէն:

Կնիք Թաղ. Խնամակալութեան

Տեղիս Թաղ. Խնամակալութեան տուած այս պաշտօնական հերքումը կուգայ հաստատել անգամ մ'ալ և մեղի յիշեցնել թէ՛ «Արևելք»ի Տեղացին — որ անցած շաբթուն իր պիղծ տումարին (Արշալոյս) մէջ ալ թափեր էր կատղածի լորձունքները — նոյն այն Հրապարակային Ստախօսն է որ անգոյ նիլի, Մանարանի, ևն առասպելներ հնարեց ատեն մըն ալ: Բայց այդ Տե-

ղացին անցեալները թաղեցին «Փիւնիկ» ի մէջ. Անթաղ Իրակը, որուն վերջին թաղումն կնքած էինք զամբանակա- նով մը: Ենական սուտերու հեղինակ եւ կորսուած դատերու փաստաբան ու մնանկներու թէ տնանկներու խշալուզ այդ Տեղացին ելեր հիմակ ալ Պոլիս փորձեր է փոխադրել կուռավայրը, միակ չար գիտումով մը թէ ծովէն անդին դիւրաւ կը կլլեցնէ ու առանց նեղութեան կը մարսեցնէ տեղիս ազգ. գործերուն վրայ իր յերիւրելիք ստայօղ զրպարտութիւնները... Սակայն, ժընէվէն ալ փորձեց ատանկ ցածութիւններ — իրեն համար միշտ սովորական — ու խայտառակուեցաւ, հիմակ ալ թո՛ղ փորձէ Պոլսէն:

Արժէթըլթեր ծախած է եղեր Խնամակալութեան Վսեմ. ֆոխ-Ատենապետը, առանց տեղեկութեան կամ հաւանութեան միւս անդամակիցներուն. սո՛ւտ է սո՛ւտ, ինչպէս որ կը վկայէ նոյն իսկ Թաղ. Խնամակալութիւնը: Յայտնի է թէ՛ եկեղեցական կամ ազգային, վերջապէս, հանրային ո՛ր և է հաստատութեան համար երբէք ներելի չէ՛ արժէթըլթեր ունենալ և թէ՛ ազգին հարստութիւնն արժէթըլթի վերածող վարչութիւնն է յանցաւոր քան թէ արժէթըլթերը ծախողը: Որչափ որ գիտենք, այդպիսի արժէթըլթեր Վսեմ. Պօղոս Բաշային ձեռքով առնուած են ատենօք. զանոնք ծախելու ամենէն աւելի եռանդու փոյթ ցուցնողը՝ մեր հրաժարեալ խնամակալն եղած է, Տիար Գ. Մելքոնեանը, որուն համար կ'ըսեն թէ ելնսագէտ մընէ, առանց կրկնատումարի:

Իպրոցը կործանե՛ր է ելեր ու բաց ի Մեսրոպ Նորատունկեանէ մը, հիներէն ո՛չ մէկը վերընդունուած է ելեր. հիներէն չէ՞ Պ. Գառնիկ Տեօֆմեանեանը, հիներէն չէ՞ Օր. Եւնիկե Ճեվանիրեանը, հիներէն չէ՞ Փրանսացի Մ. Կէյը, հիներէն չէ՞ արաբ-

ըհնի արդի ուսուցիչը, հիներէն չ'են Օր. Օր. Թարսարեանի, ևն. . . . Բայց, ուրիշ խնդիր կայ. դպրոցով՝ այդ ինկած տեղացին իր տունը կը հասկնար. իրաւունք ալ բնէր խեղճը. իր տունը կործանեցաւ Ազգ. Երկ. Վարժարանին մէջ կատարուած այս վերջին կարգադրութեամբ, ինչպէս որ մասնանշուած էր Պատ. Ազգաս Խօսքին վերջին թիւին մէջ:

Իր տունը կործանեցաւ ըսինք. թէ ինչո՞ւ: Գատրգեղէն 6 տարի առաջ այդ ինկածը՝ բերել ու ընդունել տրւած էր իր քենեկալ Պ. Ասքանազը, տնօրէն, յետոյ հասարակ մնայուն ուսուցիչ, աւելի յետոյ այցելու ուսուցիչ, 9 ոսկի ամսականով. իր ջանքերով ու ի՛ր ձեռքով յաջողած էր տարիէ մ'ի վեր, ուսուցչուհի դնել իր քենին Օր. Աղաւնի Յակոբեանը, 5 ոսկիով, (միակ արժանաւորը իր ձեռքով բերուածներէն). Ինք ալ 12 ոսկի կ'առնէր Ազգ. Մատուկէն: Ահա՛ կործանումը որ նասրէտտինի առածը չ'ընչեցնէ.

Գարըմ էօլիւրսէ քիւլիւք, պէն էօլիւրսէմ պէօյիւք գըյամէթ օլուր:

Ասկէ զատ, Պետրոսեան Հաւերարձուն ըսուած իրա՛ւ պէրպէրի-պուխա. րացի մը բերեր տնօրէն կարգել տրւած էր, Կրետէէն ալ գարձեալ ի՛նք կանչել տուած էր Վարպետ Տուտուն, ևն: Եւ հիմայ այդ ամենքն ալ աւելցին սրբեցին, հարկաւ դպրոցը կը կործանի, քանի որ իրենները հոն չ'են. . . . հոգ չէ թէ Պ. Յակ. Աստուրեանի պէս փորձ ու ձեռնհաս տնօրէնով մը, Օր. Մառի Պէյլէրեանի նման կարող ուսուցչուհիով մը և ուրիշ ոչ նուազ կարևոր ուսուցիչներով ու օգ. վարժուհիներով կառավարուին մեր այդ Ազգ. Երկ. Վարժարանները. . . :

ՆՈՐԹՆ ՎՍԵՍՈՒԲՐԻՆ
ԱՐՐԱՀԱՄ ԲԱՇԱ ԲԱՐՈՂ

Աղեքսանդրիոյ մէջ օրուան լուրն է Վսեմ. Ա. Բարթող Պէյին բարձրացումը բաշայութեան աստիճանին: Ամսոյս էին Երեքշաբթի օրը, Բարձր. Խտիլին հրամանովը, քաղքիս Վսեմ. կառավարիչը ղրկեց Ահմէտ Խայրի Բաշան, Նորին Վսեմութեան բաշայութեան բարձրացումն աւետելու եւ շնորհաւորելու պաշտօնով:

Ու նոյն օրը, խնդակցական այցելութեանց ու հեռագիրներու տարափ մ'է կը տեղայ Վսեմ. Բարթող Բաշային բնակարանը, քաղաքային ու զինուորական, քաղաքապետական, բնիկ թէ եւրոպական պաշտօնական հաստատութեանց բարձր շքանակներուն, զանազան հասարակութեանց պետերուն ու երեւելիներուն, նաեւ, Նորին Վսեմութեան բազմաթիւ բարեկամներուն կողմէն:

Ահա՛ հայազգի բաշայ մըն ալ, որ անտարակոյս պիտի չը նմանի ուրիշ հայ բաշաներու, որոնք սակայն դժբաղդարար, Թուրքիոյ կաշկանդիչ միջավայրի՞ն թէ իրենց իսկ դաստիարակութեան ազդեցութիւնը կրած են ու միշտ կը կրեն, եւ այսպէս, յաճախ առարկայ եղած են իրաւացի դժգոհութեանց, իրենց պատկանած ցեղին հանրութեանը կողմէն:

Սա իրաւամբ տէրն եղաւ, կը կարծենք, այդ բարձր տիադոսին, իր մէկէ աւելի սրտի քան մտքի օժտումներովը, իբրեւ մարդ, իբրեւ քաղաքացի եւ իբրեւ հայ:

Իբրեւ մարդ, խտիր չը դնելով ցեղի ու կրօնի միջեւ, զուտ մարդասիրական ոգիէ մղուած, Նորին Վսեմութիւնն այսօր երկրորդ նախախնամութիւն մ'եղած է իր ընդարձակ հողերը մշակող հազարաւոր ֆեղշահներուն, որոնք առհասարակ իր հայրական բարձր հոգածութեանը տակ կը վայելեն ամեն բարիք:

Իբրեւ քաղաքացի, ընկերային բարձր գիրքի տէր, երկրին անտեսական զարգացմանը սատարելու գեղեցիկ գաղափարէն առաջնորդուած, ի՛նք եղած է հիմնադիրներէն մին՝ Եգիպտական Դրամատան (Bank of Egypt), որուն վարչութեանը կարեւորագոյն անդամներէն մէկն է Վսեմ. Ա. Բարթող Բաշան:

Իսկ իբրեւ հայ, կը վայելէ այսօր հանրային յարգանքն ու վստահութիւնը

Թաղ. Խնամակալութեան Փոխ-Ատենապետի պաշտօնին մէջ, զոր կը վարէ այնքան ձեռնհասօրէն, չը թերանշուով իր ազգային պարտականութեանց մէջ:

Միջանկեալ մը.

Նորին Վսեմութեան առածի կարգ անցած առատաձեռնութիւնն ու մեծասրտութիւնը հաւատարապէս կը բաժնէ Վսեմ. Տիկին Երանուհի Ա. Բարթող Բաշայ, որ, վեց տարի առաջ, գաղթային մեծ հոսանքին, վեց ամիս շարունակ վարեց Նպաստամատոյց Տիկինանց Յանձնաժողովոյ Ատենապետութեան փշուտ ու փափուկ պաշտօնը, շատ անգամ անհատական աղբիւրէն հոսեցընելով առատ առատ երախտիքներ, սրբելու համար արցունքը հարիւրաւոր լքուած որբ եւ այրիներու . . . :


Եկեղեցասէր, աղքատասէր, դպրոցասէր. անա՛ կրրեակ տիտղոսներ, որոնք այնքան ներդաշնակօրէն կը պատշաճին մեր նոր հայ Բաշային բարձր անուանը:

Ու երբ կը փութանք մեր հասարակութեան անկեղծ զգացումները թարգմանելով հրապարակաւ արտայայտել մեր յարգալիւր խնդակցութիւնները նորին Վսեմութեան, կը մաղթենք ու կը սիրենք հաւատալ թէ ՎՍԵՄԱՃՈՒՔ՝ ԱՅՐԱՀԱՄ ԲԱՇԱ ԲԱՐԹՈՂ — չ'ըլլալով հանդերձ մուխ եւ մըրտագէտ մը, նուրբ դիւանագէտ մը կամ ներկուռ մեքենագործ — երկրաչափ մը . . . , չ'ունենալով հանգերձ գիտնակոնի ոսկեզօծ վկայական կամ մասնագէտներու շինած համբաւէն մաս մը — պիտի հանդիսանայ տիպար հայ բաշա մը, Բարձր. Խտիվին նըման լուսամիտ վեհապետէ մը կառավարուած այս ազատ երկրին մէջ, ու փառքը պիտի աւելցնէ իր պատկանած դժբաղդ ազգին. այսուհետեւ աւելի՛ պիտի մեղմէ իր ցեղին ցաւերը. մանաւանդ, պիտի ամեն կերպով բարձրացընէ վարկը տեղիս հայ հասարակութեան. որուն սրտին մէջ պիտի գիտնայ գրաւել իրեն արժանաւոր յատուկ տեղը:


— ՏԷՍՈՒՆԷՍԷ այս Հինգշաբթի օրը կը հեռագրուի թէ Ն. Բ. Խտիվին շոգեկառքը առտուան ժամը 8. 12 ին հասնելով յամրացուցեր է ընթացքը նոյն գիւղի կայարանին առջեւ, որ, ի պատիւ Ն. Բարձրութեան եւ մասնաւոր խնամքովը Վսեմ. Արահամ Բաշա Բարթողի, շքեղօրէն դրօշազարդուած էր: Գեղին մեծամեծք եւ կառավարական պաշտօնեայք բարեւ բռնած եւ

սպասած են հոն ու արժանացած՝ Բարձր. Խտիվին բարեւներուն:

Նոյն պատիւներն եղած են Ն. Ն. Բ. Մայր-Խտիվին ու Խտիվուհիին, որոնց շոգեկառքը նոյն ընթացքով քիչ մը վերջ հոն հասած է ու մեկնած:



ՆԱՄԱԿ ԳՍՀԻՐԷՆ



Գահիրե 6 Նոյեմ. 1902

Վսեմ. Արահամ Պէյ Բարթողի փաշալութեան աստիճանի բարձրացման լուրը ուրախութեամբ սղջունուեցաւ Գահիրէի հայ գաղութէն. երեկ բազմաթիւ կարեւոր անձնաւորութիւններ շնորհաւորութեան հեռագիրներ ուղղեցին նորին Վսեմութեան: Հարիւրի չափ վաճառականներ, ուսուցիչներ, արհեստաւորներ ալ այս օր հաւաքական հեռագիր մը զրկեցին Արահամ փաշային. ահաւասիկ պատճէնը այդ հեռագրին.

«Նորին Վսեմութիւն Արահամ Փաշա Բարթող Աղեքսանդրեա. խնդրենք հաճեցէք ընդունիլ մեր յարգալիւր շնորհաւորութիւնները, ի մասին բարձր աստիճանին որ շնորհուած է Ձեզ ի վարձ Ձեր անհատական արժանեաց եւ կարեւոր ծառայութեանց զոր կը մատուցանէք անդադար քաղաքիկ հայ հասարակութեան»:

Այս հեռագիրը մէկ երկու ժամուան մէջ ծածկուեցաւ բազմաթիւ ստորագրութիւններով: Զայն

ՔՐՈՆԻԿ

— ՏԻԱՐ ԶԱՐԵՀ ՍՎԱԶԼԸ գործի վրայ է. Թաղ. Խնամակալութեան որոշումովն անուանեցաւ Վերակազմիչ Յանձնախումբ մը, որուն նախագահը կարգուեցաւ ինք ու հիմայ շոգեպինդ առաջ կը տանի հանգանակութիւն մը, որմէ գոյանալիք 12 ոսկիի գումարին կէսը պիտի յատկացուի իտալացի Մախարոսին ամսականին, իսկ միւս կէսը Խումբին պարտքը մաս առ մաս վճարելու:

Ա՛լ Հայ Նուագախումբին ապագան ապահովագրուած է, քանի որ Տիար Սվազլը միտքը դրաւ զայն վերակազմել: Պատիւ իրեն. . . :

— ՊԱՅԼՈՉԵԱՆ ՄՍՏԹԷՈՍ ԷՖԷՆՏԻՆ
Իզմիրի մեծահարուստ հայ վաճառականը,
Թանի տեղեկութեանը համեմատ, վերջերս
սպաննուած է Հնչակեան տեղում:

Սպանութեան շարժառիթներուն վը-
րայ դեռ որոշ գաղափար մը չըկայ, շատ մը
մեկնութիւններ կը տրուին: Սպաննուածը
72 տարու էր կ'ըսեն, ու 4 միլիոն Ֆր. ոսկիի
հարստութեան տէր:

ՈՍԿԵՐԻՉՆԵՐ յօդուածը — Գահիրէէն
զրկուած ու նախորդ թիւով հրատարակ-
ուած — քրօդեւոյ իստրիւնիներու փորձանք
մը հանեց «Փիւնիկ»ի գլխուն. սա ի՛նչ վը-
րան բաց, սա ի՛նչ անբարոյական զրուած.
ու մերժող մերժողի. իրաւունք ունին, կ'ե-
րեւի թէ փակագծուած յարգելի բացառու-
թիւններէն չ'են ասոնք, մերժողները. ա-
տանկները յրաքերին կը զրկենք. աչքը
լո՛յս, գործ բացուեցաւ, լոյս թող տեսնէ
երբեմնի «Նոր Կեանք»ը:

— ԼՐԱԲԵՐԻՆ իրա՛ւ աչքը լոյս. յար-
գելի խմբագիրը շապիկ կը փոխէ կոր. ա-
տեն մը Քավուրի հովեր ատած՝ զիւանա-
գիտութեան յուրանին գաղաթն ելեր՝ պատ-
գամներ կը փչէր վերէն վար. եղաւ որ Բրօ
Արմենիաէն գոհարեղէն թարգմանութիւն-
ներ ալ հրամցուց իր ժողովալ ընթերցող-
ներուն. ատեն մըն ալ իսլամութեան մար-
գարէին Գուրանին յատակը սուղուեր՝ մար-
գարիաներ քաղելու ելերէր. հիմակալ, կօ-
շիկէն վեր նիւթի մը պոչէն բռնե՛ր՝ մեր Ս.
հաւատքին կենդանի նահատակը կանգներ,
ազգ, եկեղեցի, քահանայ, ոստիկան, առաջ-
նորդ, պէյ, բաշա, Փիւնիկ, Ազատ խօսք,
արդարութիւն, խոնամութիւն ու գեռ ուրիշ
չ'եմ գիտեր բաներ մը ծամծմելով կը քա-
րողէ...: Երանելի՛ Լրաքեր. «Չայնո՛» ձայն
Յակովբայ եւ ձեռնո՛ր՝ ձեռն Եսաւայոն դար-
ձար:

Արգո՛յ խմբագիր. Դուք առջի օրուան
հեռագիրները, Չիլիի, Մեքսիկայի, Գոնկօ-
յի, Բերուի, Կամպիայի, Բաթակոնիոյ, եւն
այս կարգի դրացի (°) երկիրներու ցնցող
լուրերը, կռիւները, կռիւները թարգմանե-
լով (°°) թուղթը կարիպալտիով ներկել
նայեցէ՛ք. քիլիֆօն գիտէինք զՁեզ, երբէ՞ն
ի վեր ուզեցիք արգեօք ֆօնօհրաֆ ըլլալ...:

— ՏԻԱՐ. ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ՐԷԻՉ-
ԵԱՆ վերջապէս հրատարած է տեղիս
Աղքատախնամին Մայր-Դիւանին Ատե-
նապետութենէն, կամ աւելի ճիշդը,

Ատենապետութեան տիտղոսէն. Հրա-
ժարականը զրկուած է նոյն Մայր-
Դիւանի Փոխ-Ատենապետ Տիար Զարեհ
Սվազլի:

Լաւ է անագան ֆուն երբեք:

— ՏԻԱՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ,
Հսկտ. 31 ին ուրբաթ օրուան ՄԵՆԱ-
ԺՐՐԻԻ Նիժէ շոգենաւովը մեկնեցաւ
Մարսէյլ: Մեծանուն հայ գործիչին
— որ յառաջընթաց կարապետն եղաւ
Հայկ. Յեղափոխութեան Ս. Դործին—,
Եգիպտոս այցելութիւնը նուիրագոր-
ծելու գեղեցիկ գաղափարէն ներշնչ-
ուած, Տիգրան Երկաթ Միւռքիւնը ներ-
կայացրնող քանի մ'աշնիւ հայրենա-
կիցներ, փութացին ափ յափոյ հանգա-
նակութիւն մը բանալ իրենց միջև ու
արդիւնքովը գնելով եպենոսէ թան-
կագին կաղամար մ'ու արծաթ գրիչ,
կտրիչ, մկրատ, եւն, ընծայ տուին «Ար-
մէնիա»ի համակրելի ու մեծայարգ
Տնօրէն—Խմբագրապետին:

Պատգամաւորութիւն մը, «Տիգրան
Երկաթ»ի կողմէն և «Փիւնիկ»ի խմբա-
գիրը տարին Տ. Փորթուգալեանի յանձ-
նեցին նուէրը, զոր ընդունելու պա-
հուն, պատասխանելով «Փիւնիկ»ի խմբ-
ագրին իրեն ուղղած խիստ համակ-
րաչից ու քաջալերիչ կարճառօտ խօս-
քերուն, յուզեալ շէշտերով արտայայ-
տեց իր շնորհակալութիւնը «Տիգրան
Երկաթ Միւռքիւն»ը ներկայացրնող ու
հայրենիքին փառքը կազմելու սահ-
մանուած տեղիս յառաջդիմասէր երի-
տասարդութեան. յայտարարեց թէ՛
ինք Եգիպտոսի Աղեքսանդրիոյ մէջ
աչքովը տեսաւ զգացող երիտասար-
դութիւն մը, որ ապագայ կը խոստա-
նայ:

Պատգամաւորութիւնը գնաց մին-
չև շոգենաւը, ճամբու գնելու մեծա-
նուն հիւրը, որ մեր մէջ թողուց քաղցր
յիշատակ մը, ստեղծելով նոր ու թը-
ւաւոր համակրութիւններ:

Ապրի՛ Աղեքսանդրիան, որ գիտէ

քալալերել ճշմարիտ և անկեղծ գործիչները :

ՀԱՅՍՍԱՍՆԷՆ

«Լ'էօրօրէէն» միջազգային շաբաթաթերթին Հոկտ. 25 ի թիւէն թարգմանաբար կ'արտագրենք.

Երբ Օրմանծան Պատրիարքն իր հրատարականն ետ առաւ ու Սեպտ 1ին, Սուլթանին գահակալութեան տարեգարծին օրը հանդիսաւոր ալօթք մ'արտասանեց անոր քանկագիմ կեանքին համար, քերականացի խօստումն առած էր թէ՛ Թուրքիոյ Հայերուն բազմը պիտի բարւոքէր. ասոր վրայ, մանաւանդ գերմաներէն լրագիրներ, ո՛չ պաշտօնական զեկոյցներ հրատարակելով աւետեցին թէ Հայկ. Հարցը լուծում գտաւ և թէ՛ վեհապետը հաճեցաւ ներել այն ազգին, որուն 300 հազար անհատները մորթել տուած էր:

Ամեն մարդ կարգաց յետոյ թէ ինչպէս Ապր-իւլ-Համիդ, իրօք կայսերական խաբեբայութեամբը չը բռնեց իր խօստումը: Համաձայնութեան գլխաւոր կէտերէն մէկն էր գաղթականներուն իրենց տեղերը վերադարձը, բայց Սուլթանին համար Անգրկովկասի 40000 գաղթականները գոյութիւն չ'ունէին, թէև ասոնք եօթը տարի շարունակ վճարած էին Թուրք հարկերն ու չ'էին ուզեր ուսանալ, դարձեալ ասոնց կը խափանէր սահմանագրիւն անցքը: Մինչև ցարդ յայտնի չ'եղաւ թէ ինչ արգիւնք ունեցաւ խեղճեռուն աղերսագիրը Ֆրանսական ու անգլիական կառավարութեանց ուղղեալ. բայց, Բրօ Արմէնիա ի խմբագրութեան ստացած հեռագիր մը խիտ յուսահատական ցոյց կուտայ անոնց կացութիւնը. Թուրք իշխանութիւնները զանոնք կա՛մ Ռուսիա կը վճտեն և կա՛մ կ'ստիպեն որ իսլամանան, իբրև միակ պայման իրենց ներս ընդունուելուն: Եւ որովհետև Թուր-

քիոյ մէջ կրօնքը համանիչ է ազգութեան, իսլամանալով գաղթականները պիտի կորսնցընեն իրենց հայութիւնը: Կը թափառին ուրեմն սահմանագրելու, ցուրտ երկիր մը, ուր ձիւնը գալ սկսած է առատ առատ, ծածկած է լեռներու արահետները, խափանած է կիրճերը, ու եթէ ո՛չ քաղցէն, ցուրտէն պիտի մեռնին:

Իսկ թէ հանդարտութիւնը կը տիրէ՞ Թուրքիա, երկու տեղեկագիրներ, պաշտօնական աղբիւրէ, դարձեալ Բրօ Արմէնիաին հասած, ցոյց կուտան թէ ինչ պէտք է հասկնալ այդ բառով, երբ Ապտ-իւլ-Համիդի բերնէն ելած է այն: Այս տեղեկագիրները շատ սահմանափակ գաւառներու կը վերաբերին. Ախլաքինը, Վանայ լճին Հիւս. եզերքը. Պոչանլիքին ու Մանազկերտինը, Մշոյ Հիւս. Արեւելքը, ու Մշոյ Սահագին քանի մ'ուրիշ գիւղերունը: Շատ մ'ամիսներէ ի վեր Ֆրանսական, անգլիական ու ռուսական Հիւպ. Գործակալներ կը ընակին Մուշ և անկարելի է որ այս յետագայ իրողութիւնները գիտցած չ'ըլլան կառավարութիւնները, որ ուզած են գիտնալ զանոնք:

Տեղեկագրաց մէջ անուանուած քուրտ պետերը, ամենքն ալ արիւնոտ համբաւ մ'ունին, մասնաւորապէս Սալիտ Ախլաքիներէն, ու Բիշա՝ Հասանալիներէն. Բիշան եղբայրն է Ֆեդուլլահի, որուն նախնիները պատմեցինք, Հասանալիներուն գերագոյն պետը. Համիդի չորս գնդեր կազմուած են Ախլաքիներէն Վարդօ գաղային մէջ և հինգ գնդեր հասանալիներէն Մանազկերտի բոլորտիքը:

Ահա վերլուծումը 2 տեղեկագրաց. Վան, 20 Սեպտ. — 12 Սեպտ. Թովմաս Մանուկեան, Բարթանտի (Ախլաթի գիւղ) երեւելի, Գուրտերէն փակուեցաւ իր տան մէջ. Արշակ ծառան կրցաւ իմացընել անոր մօրը, բայց

բոլոր սղաչանքները զուր եղան. Բուր-
տերը կը պնդեն թէ՛ հրամանով կը
գործեն և թէ պէտք է Հայերը սպան-
նեն: Մանուկեան թովմաս բռնուեցաւ
ու յօշոտուեցաւ, մօրն արգանդը ճեղքե-
ցին, ծառային գլուխն ու ոտքերը
կտրեցին, յետոյ տունը թալլեցին:
Ախլաթի իշխանութիւններն իմացան,
բայց ազատ ձգեցին Ֆէրման քուրդ
պետը, որ սարքած էր այս սպաննու-
թիւնները, ու Հայեր ձերբակալեցին
իբրև ոճրին հեղինակները: Այսպէ՛ս
Պիթլիսի Սանճագին մէջ, Հայերը ճիշդ
արջառի պէս սպանդանոց կը տարուին
ու մորթողներուն ձեռքը կը մատնուին:

(Շարունակելի)

ԱԶՁ

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ
է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգ-
լերէնի, տուներու մէջ ալ, խիստ զսնացու-
ցիչ եւ դիւրամատչելի պայմաններով:
Փափագող երբ դիմեն Փիւնիկի խմբա-
գրութեան:

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ:

ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ,

ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

Ամերիկեան վկայեալ բժիշկ
Մեսուրիս փողոց թիւ 1
«Ճար s'Աղեֆսանսրի»ի սյարանիւն
Վրայի Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոզեան
պատիւ ունի ծանուցանել Տեղիս ար-

գոյ հասարակութեան թէ՛ ինք հաս-
տատուած է վերջնապէս քաղաքիս մէջ
ու պատրաստ է դարմանելու ընդհա-
նուր հիւանդութիւններ: Մասնագի-
տօրէն ու Ամերիկայի կատարելագոր-
ծուած ու նորագոյն բժշկական փոր-
ձերով ու սխարհով կը բուժէ հանա-
ւանդ արեան վերաբերեալ զանազան
ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ախն օր
կէս օրէն ետքը ժամը 2-5. Իսկ Զո-
րեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան
ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ ի-
րեն դիմող ազքատ հիւանդները:

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՆԵՐՈՒԿ ԿՐԹԱՏՈՒՆ
ԼՕՁԱՆ, ԶՈՒՌՅԵՐԻԱ**

Կրթատունս կ'ընդունի 10 էն 20
տարեկան աշակերտներ, որոնց գիտա-
կան, գրական, արհեստագիտական, ևն,
առողջ ու կատարեալ կրթութիւն մը
կուտայ, ծնողքներու բաղձանքին հա-
մեմատ: Եւրոպական և ասիական լե-
զուներու, գիտութեանց և վաճառա-
կանական ուսմանց մէջ գործնականն իր
կարևոր տեղը կը բռնէ տեսականին
քով: Զանազան ազգէ գասատուներու
և աշակերտաց ներկայութիւնը լեզու-
ներու ուսումը բարձրովին կը դիւրացնէ:
Իսկ կարևոր քաղաքներու և գործա-
րաններու այցերը գիտական ուսուց-
ման մեծապէս կը նպաստեն:

Կրթատունս մեծ խնամք կը տանի
նաև բարոյական և ֆիզիքական կրթու-
թեանց:

Հայ ծնողներու հաւար մասնա-
ւոր պայմաններ:

Մանրամասնութիւններու և պայ-
մաններու համար գիմել առ

I, Longeraie, Lausanne
Suisse

Տնօրէն
Մ. Նալպանտեան
Տօքո. Ի Գիտութիւնս
Մասնաւոր-Ուսուցիչ Հա-
մալսարանի